ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան 02 հուլիսի 2024 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 187-Ա

ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N 11 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» 14-րդ կետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել այլ երկրներում ստացած գիտական կոչման փաստաթղթերի համապատասխանեցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի նախագահի 2003 թվականի օգոստոսի 27-ի «Գիտական կոչման դիպլոմի (վկայագրի) համապատասխանեցման կարգի մասին» N 11 կարգադրությունը:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Հավելված

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
նախագահի 2024 թվականի հուլիսի 2-ի N 187-Ա
հրամանի

Կարգ

Այլ երկրներում ստացած գիտական կոչման փաստաթղթերի համապատասխանեցման

1. Սույն կարգով սահմանվում են այլ երկրներում ստացած գիտական կոչման դիպլոմի (վկայագրի) համապատասխանեցման գործընթացի հետ կապված հարաբերությունները՝ «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգին» և «Հայաստանի Հանրապետության գիտական կոչումներ շնորհելու մասնագիտությունների անվանացանկին» համապատասխան:

2. Այլ երկրներում ստացած գիտական կոչման դիպլոմի համապատասխանեցումն իրականացվում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:

3. Դիպլոմի համապատասխանեցման համար Կոմիտե ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերն են.

1) դիմում՝ Կոմիտեի նախագահի անունով,

2) համապատասխանեցման ենթակա գիտական կոչման դիպլոմը (պրոֆեսորի գիտական կոչման դիպլոմի համապատասխանեցման համար, նաև՝ դոցենտի գիտական կոչման (առկայության դեպքում) դիպլոմը) և դրա պատճենը (դիպլոմի բնօրինակը վերադարձվում է պատճենի հետ համեմատելուց հետո),

3) դիպլոմի՝ նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունը,

4) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

5) գիտական աստիճանի դիպլոմի պատճենը (դոկտորի գիտական աստիճանի դեպքում՝ նաև թեկնածուի գիտական աստիճանի դիպլոմի պատճենը),

6) անձնական թերթիկ,

7) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակը,

8) գիտության, մանկավարժության, մշակույթի, սպորտի բնագավառներում նվաճումները հաստատող փաստաթղթերի պատճենները,

9) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում) գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ,

10) անձնագրի պատճենը:

4. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված փաստաթղթերը դիմողը ներկայացնում է 1 (մեկ) օրինակից:

5. Համապատասխանեցման մասին որոշումն ընդունվում է գործի (փաստաթղթերի) ուսումնասիրման հիման վրա և դրական որոշման դեպքում տրվում է համապատասխան փաստաթուղթ, որը հաստատվում է Կոմիտեի նախագահի հրամանով: